Արձանագրություն N 4
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» «Ապրիլ» 2019թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ Հ.Թամրազյան, Մ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ներկայացված տեխնիկական բնութագրի շտկման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը՝ առաջարկվել էր «Անալիզ Մեդ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով լիարժեք տեխնիկական բնութագիր:

«Անալիզ Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է լրամշակված տեխնիկական բնութագիր, որը որոշվեց գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. *Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին*

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա **որոշվեց** «Վիոլա» և «Անալիզ Մեդ» ՍՊԸ-ների «Ֆինանսական չափորոշիչը» գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «Վիոլա» և «Անալիզ Մեդ» ՍՊԸ-ներին ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը:

Կազմակերպությունների կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և բնութագրերը ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա **որոշվեց** «Վիոլա» և «Անալիզ Մեդ» ՍՊԸ-ների «Տեխնիկական չափորոշիչը» գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունները.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/11» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել՝

•«Վիոլա» ՍՊԸ-ն՝ 1 չափաբաժնի մասով՝ 15,710,898 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

•«Անալիզ Մեդ» ՍՊԸ-ն՝ 2 չափաբաժնի մասով՝ 2,116,500 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/11» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի մայիսի 7-ից մինչև 2019 թվականի մայիսի 11-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Հ.Թամրազյան

---------- Մ.Հարությանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան